# Արձանագրություն N 3

**«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/43» ծածկագրով «Ծաղկաձորի համայնքապետարան»-ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով «Ծաղկաձոր քաղաքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարրական մասնաշենքի ջեռուցման և գազամատակարարման համակարգի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ»-ի ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

ք.Ծաղկաձոր 09 նոյեմբեր 2023թ.
ժամը 10:00

*Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջին փոխղակալ Ոսկան Եղիազարյան*

*Հանձնաժողովի անդամներ՝*

*համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ Գոռ Առաքելյան,*

*համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության հարցերով կազմակերպիչ/ Սամվել Այոյան,*

*համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ Կարեն Աղայոյան:*

*քարտուղար՝ Ա.Ավետիսյան*

***1. «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունների շտկման և ոչ գնային պայմանների գնահատման մասին***

---

1.1 Ընդունել ի գիտություն, որ *«Գոլդ Ներս» ՍՊԸ -ի* կողմից սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկվել են *«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/43»* ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները:

**1.2** Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **սահմանված կարգով գնահատել մասնակիցների ոչ գնային պայմանները:**

**1.3** Ոչ գնային չափանիշները գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են հետևյալ կարգով.

---

| *<u>Ոչ գնային չափանիշներ</u>* | *<u>Գնահատման չափանիշը</u>* | | |
|---|---|---|---|
| *<u>Մասնակիցների անվանումները</u>* | *<u>Մասնագիտական փորձառություն</u>* | *<u>Աշխատանքային ռեսուրսներ</u>* | *<u>Ընդամենը</u>* |
| «Գոլդ Ներս» ՍՊԸ | 40 | 30 | 70 |
| «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ | 40 | 30 | 70 |

Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով **/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/**.

| *<u>Մասնակիցների անվանումները</u>* | *<u>Գնային պայմանի գնահատականը</u>* |
|---|---|
| «Գոլդ Ներս» ՍՊԸ | 30 |
| «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ | 14,7 |

Բավարար գնահատված յուրաքանչյուր մասնակցին տրվող գնահատականը գնահատվել է հետևյալ կարգով **/համաձայն հրավերով սահմանված բանաձևի/**.

| Մասնակիցների անվանումները | Մասնակիցներին տրված ընդհանուր գնահատականը (ՄԳ) |
|---|---|
| «Գոլդ Ներս» ՍՊԸ | 42 |
| «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ | 31,2 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 2. *«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/43» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի մասին*

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ ***«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/43»*** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել՝ ***«Գոլդ Ներս» ՍՊԸ***-ն՝ որպես հրավերի պահանջները բավարարող, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և ամենաբարձր գնահատական (ՄԳ) ստացած մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 3. *«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-23/43» ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին*

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.2 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի /10 օրացուցային օր/ ավարտին հաջորդող 4-րդ աշխատանքային օրը ծանուցումն ուղարկվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Անգործության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **10 աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 տոկոսի չափով: Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ բանկային երաշխիքի կամ կանխիկի փողի ձևով:**

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

| Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը | Ստորագրությունը |
|---|---|
| *Նախագահ՝ Ոսկան Եղիազարյան* | |
| *Անդամներ՝ Սամվել Ալոյան* | |
| *Գոռ Առաքելյան* | |
| *Կարեն Աղալոյան* | |
| *Քարտուղար՝ Ա.Ավետիսյան* | |